

կելու թէ հօն մարդկային բնակութիւն եղած է : Կարծես քարանց ողողում մ'էր , որ տարածուեր էր ամեն կողմ , և ծածկեր ամբողջ արտերը :

Միւս ափունվը կը բարձրանար եկեղեցւոյ մը զանգակատունը , և էր լասաւ առ այ Սոմմայի ժողովրդապետութիւնը , և էր իբրև սահման աւերմանց . և ասիկա այն աստիճան կատարեալ էր , որ թուի թէ լաւան իր ընթացից վրայ զքաղաքը կործանեն ու թաղեն մէկ ըրեր էր . այդ անյագ հրէն ոչ միայն կլլեր էր զայն , այլև մաշեր : Թողած չէր հետք մը գէթ գիրքը իմանալու համար :

Բարեբախտաբար այդ աւերմանց մէջ մարդկային զոհ չի կար . վասն զի բոլոր բնակեցք ժամանակին փախեր

էին : Ապրիլի 26ին կէսօրուընէ ետքը ժամը ուժին , կը սպառնար լւաւան Ա . Սեբաստիանոսի դէմ , և ժամը իննին անհետացեր էր այդ քաղաքը . միակ զո՞յ վեսուլի բարկութեանը :

Թանձր ամպ մը ուսկից կը ճայթէին կայծակը և որոտունք , կը պատէր զբաժակը , և կը մթագնէր իր աւերածոց ախուր հանդիսավայրը . բայց այդ ամպն երբեմն երբեմն կը պատաէր , պարզերով զլեռը , որ այլաձեւալ ու ալսորեալ կը թուէր 'ի մոխրոյ : Թէպէտ մարած էր , բայց միշտ վայրագ ու սպառնալից , անզեղջ չարագործի մը կը նմանէր , որ իր կատաղութեան վերջին թափէն յոդնած , լոռութեամբ նոր ոճիր մը կը մէքենայէ :

Վեսուլ լուած է հիմա :

## ՔՆՆՈՒԹԻՒՆՔ Ա.ՍՈՐԵՍՏԱՆԻ ԵՒ ՔԱՂԴԱՍԱՆԻ ՎՐԱՅ

( Յուզում ունաւ )

Քսանըհինգ կամ երեսուն տարուընէ 'ի վեր քանի անգամ ստիպուեցանք սորպելու , մոռնալու , նորէն սորպելու Ասորեստանի և Քաղղէացւոց պատմութիւնը : Ի՞նչ աղէկ էր հաւատարիմ մնալ Յունաց և Երբայեցւոց մեղի աւանդածներուն — Նինսախն վրայ՝ որ Նինուէ շինեց և Նինուաս որդի մը ունեցաւ , Շամիրամին որ Բարելոնը հիմեց , աիրեց Ասոյի մինչև Գանգէս , և միայն Սորագովպիսի փիղերէն յաղթուեցաւ , որն որ Վոլցերի ողբերգութեան մը արժանի գտնուեցաւ : Բայց Պողպայք , Լայարոսք , Ռէվլինսոնք , Լընորմանք , Օպպէրը ումանք՝ Ասորեստանի և Քաղղէաստանի Երկիրը պեղելով , ուրիշները սեպաձևներուն ընթերցմամբ , և թափանցերով ասիական լեզուաց խորը , վեր 'ի վայր տապալեցին պատ-

մութիւնը . և ամեն օր կը խառնակեն : Ցեղ մ'ալ կատարելապէս շենք գիտեր : Ամեն վայրկեան Նինուէին և Բարելոնի նոր նոր թագաւորներ կը գտնուին : Իրաւցընէ քանի մը զժուարութեանց լուժմունքները կը գտնուին , բայց զիմացնիս աւելի մեծամեծներ կ'ելլան , և խնդիրներ որոնք նորէն լուծման կարօտ են :

Այսու հանդերձ կրնանք ըսել որ պատմութիւն մ'ալ ունինք , ուսումնական պատմութիւն մը Ասորեստանի և Քաղղէացւոց . սեպաձև գիրերն ալ եղիպտական սրբադրողմ տառից պէս ապահով կանոններով կը կարգացուին . որոշուեցան զանազան ցեղեր , Արեանք , Դուրանեանք , քուշացիք , սեմականք , որոնք ամենն ալ նոյն տեսակ գրելու դրութիւն մը գործածեցին : Պայլատանց

որմոց վրայէն, յաղթական կոթողներէն, աղիւսներու, կարասներու և կոներու վրայէն բազմաթիւ գրութիւններ կարգացուեցան, այնպէս որ այսօրուան օրս նինուէի և բարելոնի աշխարհակալացաց վաւերական յիշատակարանք և աւանդութիւնք, բազմազդոյն են քանընտիր հեղինակներու մեջ տուած անորոշ տեղեկութիւնները:

## Ա

Պ. Մէնան, որ ատենօր Սորպոնի մէջ կատարած է ասորեստանեաց գրութեան ընթացքը և նշանաւոր եղած է Գաղղիացի Նինուէախոսից մէջ, միաբը գրաւ մէկ զինաւոր հատորի մը մէջ ժողվելու Եփրատայ և Տիգրիսի իշխողացմէ առ մեզ մնացած գրութիւնները: Ժամանակազրական հարգուած մը զանոնք չարելով իշխանաց անուան տակ, կազմեց Աստերեասեի բազատարաց Տարեգիրքը, Ասով Պ. Մէնան զիմացնիս և իշխաններ հանեց, որոնք թագաւորեցին ՚ի Քաղաքի կամ ՚ի ՚Նինուէ. վասն զի Ասորեստան զանազան ժամանակ երկու կամ երեք մայրաքաղաք ունեցաւ: Ամենէն հարաւայինը Քաղաք, որուն Արաբացիք սուրբ Գրոց անունը պահած են ՚Նեմրու կամ ՚Նիմրուտ, շատ ծաղկած էր Սաղմանասարի ժամանակ և յետոյ կործանուած ըլլալով, նորոգեց զայն Ասուր-Նասիր-Նասպաւ: Հոն կը գտնուին Թագաւորներէն կառուցեալ զանազան պալատանց աւերակներ, որոցմէ ումանք՝ զորս կառուցին երէցն Սաղմանասար, Սամսի-Ղին, Ղին-Նիբրարի Բ, Թաքրադ Բալ-Ասար (որ սուրբ Գրոց Թագզաթբազասարն է), Ասսարհատոն, Ասուր-Իսիլ-Խիլլ, ՚Նինուէի յետին թագաւորը, մինչև այսօրս ծանօթ են: Կը տեսնուի որ գրեթէ ամեն իշխան կարեւորութիւն մը կը տեսնար սեպական պալատ մը շնինը, թողլով զանոնք որ իր նախորդաց պատիւը Կ'աւելցնէին, և երբեմն իրենց շնինը պատճառաւ զանոնք կործանել և անոնց աւերակովը կառուցանել, Քաղաքի

պալատներուն մէջ ամենէն նշանաւորն է Ասոր-Նասիր-Նասպալին, որուն սենեակներէն մէկուն մէջ գտնուեցաւ ասորի լիւզուաւ երկայն արձանադրութիւնն մը, և որուն մէջ կը գրէ այս իշխանը իր արշաւանց պատմութիւնքը:

Դէպ ՚ի Տիգրիս երթալով, Մուսուլի գիւմաց, երկու արուեստական լեռնակներ կը տեսնուին Քայունափի և ՚Ներիոնոսի, որոնք ՚Նինուէ մայրաքաղաքին մէջ բարձրացան: Ասութինը փորելով գտնուեցաւ Սենեքերիմի պալատը և իր որդւոյն Ասսարհատոնի: Սևնեքերիմի պալատին մէջը, զոր նորոգեց Ասուր-Պանի-Բալ, զբանուեցան նսել մը աղիւսներ, տասը հոգարի չափ, որ ըսել է Ասորեստանին այց մատենադարան մը, զոր վերջի իշխանը կարգի դրաւ, և որոնց մէջ շատ տեղեկութիւններ կան, Ասորեստանին այց գիւտութեան, իրաւանց և առանձնական բարուց վրայ: Միւսն ՚Ներիոնոսի լեռնակը, զոր շատ գարերէ ՚ի վեր կը յարգեն տաճկէր իբր Յովիսանու քարոզութեան տեղը, ուր Սևնեքերիմի ուրիշ պալատի մը աւերակները կը գտնուէին:

Վերջապէս ՚Նինուէի հիւսիսային արևելքան կողմը, Մուսուլին ՚ն հազարամեդը զեռու, Պ. Պօդգա, Սարկոն հզօր թագաւորին բուրաստանքը գտաւ, որուն աւերակը թորսապատ գեղին տակը թագուած են: Այս սատանին մէջ որ բոլորովին իր ձեռակերտն էր և իր նախնեացմէ բան մը չկար, բազմաթիւ պարատներ շնինց, որոնց անթիւ արձանագրութիւնները և հրաշալի բանդակիները իր վրայ միայն կը խօսին: Հոն հսկայածն ցուկեր մարդու գրլովվ, մօրուքաւոր և թագազարդ, որոնք այսօրուան օրս կը զարդարեն Լուգրի թանգարանը: Հոն սեպածն զրերով լեցուն տասնըշըրս սրահն կը պատմեն իր աշխարհակալութիւնները, որոնց նման գեռ Աստերեաստանի թագաւոր մը չէ ըրած, որովհետեւ Միթիներկանը անցեր է և նուածեր է կիպրոս և ասիական Յունաց կղզիները:

Պ. Մէնանի գրուածը ունի շատ մը աշխարհացոյց տախտակներ և յատակազիերէր, որոնք Ասորեստանի տեղագրութիւնը կը ցցունեն, մանաւանդ ՚Նիմրուտի (Քաղալի), ՚Նինուէի և Խորսապատի:

Պ. Մէնանի նշանակած էն Թագաւորնե-

րէն, կէսը Փրիատոսի թուականէն 17-18 դար առաջ են։ Ասոնց վրայ քիչ տեղեկութիւն ունինք, իրենց անուններն անգամ աղէկ չեն կարդացուիր։ Իսկ միւս 22ին նշանակեալ թուականներն դեռ անսույզ մնացած են նոյն զիտոնց առջև։ Այս ժամանակէս մինչեւ Նինուէի և Ասորեստանի առաջին քանդումը եղած թուականը սույզ կը համարի։ Եթէ ասիկայ այսպէս ըլլայ, պէտք է սրբազրել այն թուականը զոր իր Հին Պատմութեան մէջ գործածեց Պ. Ֆ. Լընորման (1869) և որն որ Մէնանի գործածածէն դար մը կը տարբերի։ Իսկ Մէնանինն ալ պէտք է ճշգել Պ. Ռէջինսարնի, Հինքսի, Պոզանքէի, Սոորեստանի թագաւորաց շարքին վրայ ըրած նորոգ խուզարկութեամբք, զորոնք նորոգեցին տարուէ տարի, իմնուն (կամ Անուանի) կոչուած տախտակերուն վրայէն։

Գլխաւորապէս Պ. Մէնանի Տարեգրոց մէջ, ամենէն ընդարձակ և ամենէն կարելոր յիշատակարանքն են, թագղաթբազասարի Ա. (1130 ՆՔ) Ասուր-Նասիր-Նապալի (882 ՆՔ) Սաղմանասարի (857), թագղագրաղամասարի Բ. (744), Ասրկոնի (821), Սենեքերիմի (704), Ասսարհատոննի (680), Սոուր-Պանի-Բալի (669) վրայ։ Պ. Մէնան ջնացեր է իրաքանչիւր թագաւորաց անուան հետ նշանակելն անե աղբիւրներն ալ, այս կորողը կամ այս կոնս, այս սրահին կամ այն սեան արձանագրութիւնը. որք երբեմ շատ ընդարձակ են։ Զոր օրինակ Սարկոն, որուն անունը միայն կու տայ Ա. Գիրը. <sup>1</sup> և թէպէտ աշխահակալեր է Ցունական ծովուց վրայ, այսու հանդերձ անունն անգամ չեն զիտեր Յոյն պատմիչք, Պ. Մէնան յիսուն էջ գրութիւն ունի անոր վրայ։ Բոլոր այս պատմութիւնը Խորսապատի աւելիականներէն եւաւ։ Հերոդոտոսուք, Կտեսիասք, և Ազիկառնացին Դիտնեկիսոյաւունական մոռացութեան մէջ թողուցեր էին Ասրկոնը. Պ. Պոդայի պէղմանքները զանիկայ գուրս հանեցին։ Եւ այսօրս Ասորեստանի թագաւորաց մէջ իր պատմութիւնը ամենէն պայծառն է, ու

<sup>1</sup> Այս Սոբէնն կը յէշուի յնասյէայ, Գ. Ի. որ ՚մերն է Անոն որդոյ ասորեւորմեայ, իսկ յայժմ մեան յըյն՝ Աշու կամ Նարա. բայց Սոբէնն կամ Սոբանն կը գանսուի Թէոդիտանի և Ամիանոսի թարգմանութեանց մէջ, որով և ՚ի բուն յերրայական բնագրին։

իր արշաւանքները միակ վասեր գրութեամբք ծանօթ են, մինչեւ Պ. Ֆ. Լընորման կրցաւ ըսել, որ իր թագաւորութիւնը այնպէս մանրամասն ծանօթ է որքան կամ աւելի քան զիուվմայեցի ինքնակալի մը։

Ընդհակառակն Ասորեստանի երկու մեծ աղիտից, Սարդանարազի ժամանակ Նինուէի կործանման, և երկրորդ անգամ Ասսարակոսի ատեն, ասոնց վրայօք Պ. Մէնան քան մը չգտաւ։ Ճանշնալ անգամ շուզեր զԱրդանաբազ և զԱսսարակոս։ Ցիշտակարանաց պէս լուռ կուզէ կենալ լաւագոյն համարելով Յունաց մեզ տւանդած ճայները կրկնել, կամ մարգարէից երկրորդ Նինուէի գէմ ըրած անէծքները։ Բայց Ասիոյ տարեգրոց այսպիսի մութ ու շփոթ ժամանակի մը վրայ՝ արձանագրութիւնք կը լսեն, և առանց ասոնց ալ մեր գարուն ուսումնական պատմութիւն մը շազմուիր։

## Բ

Արձանագրութեանց մէջ ամենէն հիներէն մէկն է երէց թագղաղաղասարինը որ ԺԲ գար առաջ է քան գիրիստոս, և գաղափար մը կու տայ որ ինչպիսի անձինք էին Տիգրիսի ափանց իշխեցողքը։ Նախ կը սկսի աղերսել բոլոր Ասորեստանի աստուածները, որոնք գրեթէ ամենն ալ պատերազմական կ'երեւան։ Ասուր՝ որ աստուածոց լեզենները կը վարէ, որ՝ թշնամեաց խորնորդը կը ցրու, Պին՝ որ ապստամբաց երկիրները կ'ողոյէ, Ասուր-Պամտան հզօր աստուածը՝ որ թշնամիքը կը տապայէ և արորիս կը շեէ, Խադար՝ Յաղթութեան աստուածուհին, իրաւարար պատերազմաց։

Ցեսոյ կարգաւ կու գան թագղաղբաղադասարի պատերազմները, առած և այրած քաղաքները, ժողովուրդք՝ որոնք զգացեր են «իր աստուածոյն Ասուրի սոսկալի սարսափը, պղնձէ սայշերուն անիւներուն տակ Զախարիած բանակները, ձեռք բերած հարստութիւնները, գերիները, որոնք վեհափառութեան ծնկուըներուն պղլուցան, թագաւորք՝ որոնք պատմանդ տուին իրենց որդիքը, իրենց սրտից շառաւիդքը»։

Յանկալի էր որ Պ. Մէնանի հրատարակած գրութեանց, ժողովրդոց և քաղաքաց վերաբերեալ, բազմաթիւ աշխարհագրական ծանօթութիւնք և բացայացութիւնք աւելցուէին:

Ամեն պատմութեան ետև միշտ այս կրկնութիւնը կայ « Ես եմ Թագղագրադասար, չարաց խորտակիչ, գերեաց սպառիչ » :

Բայց Թագղագրադասար միայն աշխարհակալչէ, այլ և յաջորդ Ներրովթայ ևսկայ որսորդ առաջի տեսան », յոյն և ասորի Հերակլէսից նախանձորդն է, յաղթող Երիմանդեան վարազներուն, պղնձոտն եղանց, Նեմևան առիւծուց, որոնք աշխարհքիս նախնական անտառներուն մէջ այնքան կատաղի գաղաններ և հրէններ տապալեցին: Իր պատերազմական նահատակութիւններէն վերջը, ահսւասիկ որսորդական արութեանցն ալ շարքը « Վարազ չորս կալայ կենդանւոյն... զօրութեամբ Արդարոյ որ 'ի թիկուն նեկաց ինձ, սպանի առիւծուն հարիւր և քանան, ճակատ առակատ մարտեաց ընդ նուս և առ ոտն' հարի, կառօք իմովք զբաւմի ածի ութհարիւր առիւծուն, և թաշունն երկնից չզերծաւ 'ի թոփշան 'ի սլաքաց իմոց » :

Կը պատմէ յետոյ ինչպէս իր թագաւորութեան սկիզբը « աստուածքն մէծք, տեաքր իւր, հրաման ետուն շինել ինքեանց սրբավայր » և ինչպէս ինքն ալ կաղմեր է աղփանները և այնպէս խոր ձգեր է հմտուաքք « իբրև զանգունդոս ուստի համբառնան աստեղք »: Արձանագրութիւնը մաղթողական ձևով մը կը լմնայ, ուր յաստուածոց օրջնութիւն կը ինդրէ անոնց համար որոնք պիտի յարգեն այն յիշատակարանները « յորս նահատակութիւնք իւր գրումնեալ են »:

« Ես որ բացուցանէ, աշարտ կամ եղծանէ « գտախուսկան և զվեմս շինուածոց, որ 'ի « ըստ հուկ զնոսա, 'ի հուր արկանէ, ծածկէ « ընդ հողով, կամ յանտես 'ի մարդկանէ յնէ և տեղով, չիշ զիմ անոնք դրոշմեալ ան՝ զի և զիրք դիցէ. կամ անձինք գրեաց ոյ ինչ 'ի և նուս պատմին վեպր. և կամ այրայէ զարւ ճանացիրս, լինս և Պին աստուածքն մեռ « ծաբանէ, տեաքր իմ, յանենայն զօրութեան և իշրեանց անքնացնեն զնա, չարաչար եզու

« վիք եղովնացնեն զնա, տապաշեացնեն զարւ և բայութիւն նորա, և զիմունն գտնու նորա և խախտեացնեն... աստուածն Պին 'ի տախասակ և որն եղովից յապականորդին գրեաց զերկիր և նորա, արից ի վերայ նորս տնանելորին, և ուզ և ախտ մահու, մի բաղցէ նմա տեսաւ և ենց զարեւ և շնչեաց յերկրէ զանուն նորս և զազգ : »

Գրեթէ բոլոր Ասորեստանի թագաւորաց արձանագիրները այս իմաստի վրայ են, մաղթանք առ զիս, յաղթութիւն, աշխարհակալութիւնք, որսոց նահատակութիւններ, մեհեաններու կառուցումն կամ նորոգութիւն, և յետոյ անէծք ընդդէմ ապագայ թագաւորաց եթէ անիրաւին առ այնս կամ բանագողութիւն ընեն :

Այս հատուածներուն նայելով, ասոնց կենարը աւելի գործօն կեանք մէջ քան զինուէի ինքնակալներունը, և կը տեսնուի որ գեռ կանանոցի զեղսութեանց և մեղկութեանց մէջ չն թուցած. ամեն տարի կը հաջուեն իրենց լիգէնները և իրենց պղնձէ կառքերը. և հիւսիս, հարաւ, արևելք, արևելուտք՝ ընդդէմ ապատամբաց և չարաց պատերազմի կ'երթան. տաֆաննելի ճակատամարտներ Հայաստանի գծնդակ լերանց, Միջագետի ամայութեանց, ասորի անապատներուն մէջ, — Համեմերելով աշխատութեան և ծարաւի, պարտասեալ զրաչից տակ Ասուրի ամենամեծ փառացը համար: Երբեմն արձանագրութիւնքը յայտնի գուրս կը ցատքեցնեն նախնական Արմիոյ բնութեան վայրենութիւնը: Կը նկարագրեն « հին անտառները » յորս առիւծունք մէր կը բնակին, Ֆարսիսդանի և Հայաստանի բարքերը, նեղ անցքերը, ուսկից շատ դժուարութեամբ կ'անցնին պղնձի կառքերը, ծամածոււ լերսնցամեջք՝ ուսկից մարդուս ոտք չկրնար անցնիլ, բարձր լեռներ սուրեկուս պէս տնկուած որոնք « կը սպառնան երկնից սլաքաց ծայրերու պէս »: Մերթ կը ներկայացրնեն զթնամին ցրուած « իբրև թռչնոց բաղմութիւն մը, մերթ մարախի պէս կը յառաջնեն խմբովին աւարհարութեան, մինչդեռ իրենց ճամբուն փոխն կ'ելայ յերկրէ եւ ճմբուածներուն ամսի պէս երկինք կը բարձրանայ, երբեմն ցորենի պէս զարնուած, հընձուած չոր խոտի պէս, ծառերու կոճըզ-

ներու պէս դիզուած » : Արքոն դէպ ՚ի Յունաց կղզիները կ'արշաւէ « ձկան պէս լողարով », և Անենքերիմ կը նկարագրէ մեղ դեղնիիա իր Երուսաղեմ մայրաքաղաքին մէջ փակուած « ինչպէս թռչուն մը իր վանդակին մէջ » : Այս արճանագրութեանց մէջ քանի մը այնպիսի փառաւոր և ուժով երեակայութեամբ գրաւածներ կան որոնց նմաններուն վրայ կը զմոցլինք Ս. Գրոց մէջ :

Եւ ինչ է արդեօր այսրան պատերազմաց և աշխատութեանց նպատակը : Աւարը երկրորդական բան մը համարուած է : Այս թագաւորներն վառողջ՝ փառաց մէրն է, փափաք մը գերազանցելու իրենց նախորդները, և ուրիշիխանաց անծանօթ երկիրներու տիրել « որոնց անունը ոչ որ լսած ըլլայ : Այս փառաց ցանկութիւնն է որ զիրենք զօրաց գլուխ կեցուցած աշխարհքիս չորս կողմը կը մղէ, և իրենց յաղթական կոթողներ կանգնել կու տայ, յորս դրոշմեալ է իրենց « վեհափառութեան պատկերը » : Կ'ազդէ իրենց այնպիսի սասափկ կշտամբանքներ, և սոսկալի անէքքներ անոնց դէմ, որոնք իրենց մեծութեան յշատակները կործանեն, և չթողուն որ սրբազն սեպաձեւ տափաց մէջ իրենցմէ վերըն ալ գեռ ապրին :

Այսպիսի գդացմունք մ'է որ զիրենք կը խրախուսէ : Բոլոր Ասորեստանի թագաւորաց վրայ յայտնի կերպով կը տեսնուին երկու շխանութիւնն ալ միատեղ. թէ զինուոր են և թէ քուրբ : Իրենց առաջին պատուանունն է Բայիս կամ քահանանայապետ Ասուրի : Արովչետեւ ծողովուրդք և մերժեցն իմ տիրով, Ասուր աստուածոյն այս տորքերը և հարկերը, որ պարտեզկան էին, անոր համար նինուէի իշխանք անոնց դէմ կը դարձնեն բանակնին : Ամպարիշտք են և ապստամբք, որովչետեւ երկիւզածութիւն չունին : Յանուն Ասուրի ինչպէս Հրեայք յանուն Եշուլյա, սրբազն մոլեգնութեամբ մը ամբողջ ծողովուրդքներ թրէ կ'անցնէին : Աստուածք են որ իրենց յաղթութիւն կու տան թշնամեաց գէմ : Ասուրի սարսափն է որ զանոնք կը նոււածէ : Վերջապէս թագագրազասար մը, Ապղմանասար մը իրենց աստուածոյն կը դարձնեն բարձրացնելոց վէնքերը յետ յերկինս բարձրացնելու հրդեհից ծովսը զոհի պէս : Այս ար-

ձանագրութեանց մէջ կը գտնուին նաև պատերազմունք, որոնցմով կը ջանան Նինուէի դից կրօնին հնաղանդեցնելու օտար ժողովուրդներ, և ճշմարիտ գնդեր՝ առնելու Ելամի երկրէն այն սրբազն նկարները, զորոնք թշնամին աղետից ժամանակ յախշտակեր տարեր է : Երբ Ապղմանասար կը յաղթէ թշնամեաց, Ասուր ալ ազգաց աստուածներուն կը յաղթէ, կը հանէ զանոնք իրենց տաճարաց խորհրդագութեան ստուերներէն և գերի կը բերէ Քաղաքի կամ նինուէ : Այս իշխանաց կարգէ գուրս փառասիրութիւնը, կը խառնուի իրենց համար կրօնական զգացման հետ : Ասուրի պաշտօնեայ ըլլայնուն համար իրենք զիրենք թագաւոր թագաւորաց կը կոչեն, տէր երկրի և ջախջախիչ ժողովըրդոց : Ասորեստանի թագաւորը իրեն և իր ժողովըրդոց համար ուրիշ բան չէ, բայց ծագումն կամ մարմնաւորութիւն աստուածութեան, կամ գոնեայ աշխարհքին վրայ զինքը ներկայացնողը, իր փոխանորդը . միով բանի « աչք Ասուրի » :

Ճեղիքի և Եփրամայ ափանց վրայ գըտուոր եղեր է միաստուածութիւնը . նոյն խկ, շատ դարերէ ետքը, մահմետականութիւնն անգամ այլայցեցաւ, Այիի և Հիւսէ-յինի ցեղերուն գրեթէ աստուածական պատի ընծայեցին, որ նոր Արաբիոյ ստոյգ Սեմականաց առջև ամբարիշտ կռապաշտութիւն համարուած է : Ասորեստանեայք թէպէտ Սեմականք, այլ միշտ կռապաշտ մնացին, մինչդեռ Հրեայք մէկ միայն աստուած մը կը ճանանային : Որչափ ալ մէծ ըլլայ Ասուր, քահանասարբայր իր բովը ուրիշ աստուածութեանց ալ Կ'երկըրպագեն, որոնք կարծես կը շատնան ըստ տեղեաց : Խսդուր զիցուէի մը կայ նինուէ, Խսդուր զիցուէի մը կայ Արբեղաւ : Այս երկու զիցուէին արձանագրութիւնց մէջ յաճախի կը տեսնուին իբրև զանազան անձինք : Եւ սակայն այս աստուածոյն բազմութիւնը նինուէի թագաւորաց պատերազմական և կրօնական եռանդեան վխաս չընէր :

Այս կուուղ թագաւորները կ'երկայ որ կառավարել չեն զիցուած : Վարչական գըրութեան պակսութեան համար, անօգուտ եղան իրենց յաղթութիւնքը : Երբ երկիր մը կը նոււածէին, յաղթուած թագաւորին սղգականներէն մէկը հոն կը դնէին : Անգագար

ապատամբութիւնք կային, և ստէկազ նինուէի թագաւորն՝ Պաղեստինու կամ Հայաստանի այս կամ այն կողմը պէտք էր երթար: Ո՞ր շափատերազմունք հարկ եղաւ ընել հրեժից պատիքի թագաւորութեանց դէմ: Այս ալ զինուալու է որ Նինուէի պատերազմ մը, ափական պատերազմաց ամեն սարսափը ունէր: Իր եռեւէն յաղթուողաց և ապրոցաց մէջ անջնջելք ոխ մը կը թողուր: Անպաճէ արձանագրութեանց մէջ, Առարի բաղնաները հաճութեամբ մանրամաննա բար յաղթուելոց վրայ ըրած անգթութիւննին կը պատմէն: Հաւասար փառք կը համարին իրենց գատակնիք մը կամ մեծ սպանութիւն մը, ինչպէս փառաւոր յաղթութիւն մը: Ասանկ զինկիդուան, թիւմուրչնկ կամ Պայէզիտ կը պարծէն, զըլոյների բուրգ մը բարձրացնելով, ցից հանելով, ողջ ողջ մորթը հանելով և կամ գերիները անպատուելով: Մողոլը, թաթարգի իրենցմէ վար չմասցին: Երկար ատեն ազգաց իրաւանց կանոն մը կերեար իրենց՝ քաղաքներ այրել, ծառերը կտրել, ժողովուրդը չնչել և թագաւորները տանելը: Մտիկ ընենք նաև Ասոր-Նասիր-Նապալի Նիմրուտի մեծ արձանագրութեան մէջ.

« Հրաման ետո հանել ընդ տուր երկերից և կ վարտոն մարտիկ, հասի զիտափունս և նոց և բրցուն ամբարձի... »

« Կանգնեցի պատուար հանեկա մեծանոր գրանց քաղաքին, մորքեցերծ արարեալ զզիսաւորս պատուամբեցոց: Ոմանք ՚ի եռ և ցանե յորմածն շինուածոց հիւսեցան, այլքն « ՚ի խաւ կամ վարսեայ ՚ի ցից ՚ի տեսի եղան ընդ երկանորդին վասուարին: դրազմացն մորք ակենքեր աշաց քերեայ նորօք գոր: Առան ետու ծածիկ, պահս ՚ի կրասիանց և նոց բայրեցի և մանեակն ՚ի վիրայից դիմականց նոցա: Հուսկ ապս ամի զԱցիսաց « ՚ի նիսու և զերծեալ զմորք ՚ի եմանէ պարզեցի ՚ի վերայ վարսացաց նինուի... »

« Յայշտակնիցի բոռու գօրուրեամբ զրա գարն Ասիրի, գերիս վեցնարից կարսանու բացի, պահեն արս երեխարից և արկի ՚ի հոր՝ ոչ ումնք անեայնալ: »

« Այրարաքի շեղակոյս մեծ դիմականց ՚ի բրեւ զսարիսապ, բէնամանեցի զուտերս նու և ցա և զդուներս: »

« Հեղաւման կորուսի յորմն ստրակս քամ ողակնեամ ենրակայ արարեալու: ՚ի դիականց գերկոց պատուար կանգնենք ցի առաջի դրաց ոստաւեին: հատի զդունու և նոցա... յանցիման մեծի դրացն կախեցի զփայտէ արս եօրենարիր... »

« Գերեալց երկերիր տեսկան ՚ի ձեռու իմ, և ես խորտակցի զդատակս ձեսա նոցա... »

« Համի ընդ տուր հիւեցնագար վեց հարիր « զինաւորս... »

Աւելի չեմ շարունակեր ընթերցողաց անախործ չըլլալու համուր: Բայց Ասոր-Նասիր-Նապալ շատ կը խրոխուայ այս իր մեծամեծ գործոց համար: Կը վախնայ որ չըլլայ թէ բան մը մոռցած ըլլայ, և աստուածոց անէծքը կը կոչէ անոնց վրայ որ այս ատելի յիշատակարանին գրութիւնը այլայլին: Յետոյ այսպէս կը վերջացնէ. « Եթէ մոռցայ բան մը այս տախտակին մէջ, Անու, բէլ-Ճական և Ալման, աստուածքն ինամակալք, իմ տեղս ըսեն »: Այս նահատակութեանց մեծութիւնը աւելի զդալի կ'ըլլայ քանդակներէն և պատկերներէն, որոնց մէջի կերպարանքները, Կըսէ Պ. Ֆ. Լընորման, յետին աստիճանին բարակութեամբ եղած են: Իրաւցնէ մարդ կրնայ գարմանայ յաղթուողաց գրուած պատժոց վրայ, մէկուն ողջ ողջ մորթը հաներ են, ուրիշներուն ականջը կտրեր են, աչքը փորեր են, մորուքը և կոմ եղոնդները քաշեր հաներ են, և այն: »

Աւելի վերջերը Ասորեստանի երկրորդ ինքնակալութեան ժամանակ պատերազմի կրաւանց կիրառութեան մէջ մէկ քաղցրութիւն մը կ'երեւայ: Այսու հանգերծ ապսուամբաց զիմանըներուն հետ նոյն վայրագութեամբ կը վարուին: Բայց Նինուէի թագաւորք կ'իմանան որ մարդկանց երամակն ալ արթէք մը ունի, և աւելի օգտակար էր յաղթուողներէն 50 կամ 100000 հոգի Ասորեստանի ամայի դաշտաց մէջ ատանել բնակեցնել, քան պարիսապ շինել անոնց դիմակներով և գլուխներէն ալ պասկ:

Ասորեստանի տարեզիրը այն ատեն աւելի մեզի կարեւոր կ'ըլլան, երբ կը սկսին իրենց յարաբերութիւնքը Հրէից կամ ուրիշ կիրթ ազգաց հետ: Պ. Մինանի հրատարակած հատուածները Ս. Գրոց քանի մը կ'ետերուն նշանակութիւնը աւելի կը

կատարելագործեն և կը ճշգեն Զոր օրինակ կը գտնուին հոն խարյակի Արքասը թագաւորին և Դամասկոսի Որդի Ազերայ թագաւորին նիդակալիցը ընդդէմ Սաղմանասարայ։ Տաստերկու թագաւորներ էին, որոնք գրեթէ 80,000 մարդ ժողովեր էին. Ասորեստանեաց արձանագրութիւնը կ'իմացընէ մեղինաև զանազան մասանց թիւը, հետեւակ, այրումի, պատերազմի կառք, ուղարք, կը մենասոի հոն որ Աքաար 10,000 հետեւակ ունէր և 200 պատերազմական կառք։ Կը գտնանք գարձեալ Բ թագավագ-բաղասարի հարկատուներուն մէջ Ազգիա անունով թուգայի թագաւոր մը։ Անզուտ Աքաար թագաւորին այն հակառակորդն էր, որուն անոնք Ա. Գիրքը չի տար, և միայն Որդի Տարեկայ կ'ըսէ։

Սարկոն իր Խորսապատի արձանագրութեան մէջ կը պատմէ որ Սամարիա տիրեր է և 27,280 հոգի բնակիչներէն տարեր է։ Սենեկերմինները աւելի հետաքրքրական տեղեկութիւնը են Եզեկիայի ժամանակի իր Պաղեստինու մէջ ըրած պատերազմաց։ Հոն կը տեսնուի որ Սենեկերմի Հրէաստանի մէջ կե քաղաք առեր է և անրի բներգեր, ու 200,150 գերի տարեր է ամեն հասկ և բազմաթիւ ընտանի անասուններ, և Եզեկիայի երկիրները մերձակայ թագաւորաց մէջ բաժներ է։

« Յայեմամ ահ և երկիրդ զօրութեան իմոյ և զարնուրեցոյ զխազաքիա զարքայ է յա- « ռուսայ. արձակիաց զգունդս զրու ՚ի պաշտ « պանուրին Ուրապիմի ռասանին իրոյ էր « մողլինազ. հրէտակու ինձ առաքեաց ՚ի բա- « զաքի նիմուն յարու իմ, և զե՞ն եռա տա- « զանդ ուկոյ երեսուն և ուրիարիդ արժա- « ռոյ, մեսուզու, ական պատուական, մար- « քարիսու, և քազմոց ձոխապանոյ ՚ի ասե- « դոյ և յերենուկ. յանձ զգանձնեն, զդուեր և « զիանայ տան իրոյ զծառայ և զադախ- « ենայս, առարեաց առ իս հրէտակու մատո- « ցանել զհարկե և հնազանդել։ »

Հատ թագաւորաց արձանագրութիւններէն կը տեսնուին կարգաւ, արիական, յոյն, կիպարցի, պարսկի ցեղի ժողովրդոց նուածիլլ։ Գիգէս՝ Հերոդոտոսի մլշած պատմութեանց դիւցազնը, խորհրդաւոր մատանւոյն տէրը, բարեկամ անխոհեմ կան- Պրակ դ.

դաւղեայ, կը գտնուի ինքն անգամ Ասուրապանիբալի արձանագրութիւնանց մէջ, և զարմանալին այն է՝ որ զինքն այն կերպարանքով կը գտնանիք՝ որ Յունաց նկարագրածին շատ յարմար է. զարմանալի և ճարտար կէտ մ'է։ Այնպէս կ'երեւայ որ Գիգէս կիմմերեանցմէ նեղուած (որոնք թերեւս կէլու Գիլիթիսաց նախնիքն էին), ուրիշ ճար չգտաւ, բայց օգնութիւն ինդրել Նինուէի թագաւորէն և հարկ խոստանալ. այս Լիւդիայի դիւթն, Ասորեստանեայց թագաւորին իմացնել տուաւ որ երազ մը տեսներ էր, որուն մէջ Ազուր աստուածը իրեն երեցեր էր Ասուրապանիբալի զօրութիւնը յայններու։ Այս պարագայէն Ասորեստանի թագաւորին սիրտը շարժելով իրեն օգնութիւն խաւրեց, որոնցմով կըցաւ Գիգէս Գիմմերեանքը վարսուել. բայց երբ անոնցմէ ազատեցաւ՝ ալ հարկ չլուզեց տալ, Այն ատեն, կը շարունակէ արքունի վիպագին, աղօթք մը ըրի առ Ասուր և առ իսդար՝ « Որ անոր դիակը թշնամեաց զիմացը իյնայ »։ Վուրելարբույին անէծը կատարուեցաւ. Գիգէս սպաննուեցաւ և Գիմմերեանք աւերեցին իր երկիրը. Ահաւասիկ այս նշանաբոր անձին վրայ նոր և հետաքրքրական հաստածներ. Ասկէ կընայ մէջ կը ըլքունել որ այս Ասորեստանեաց գրուածոց ընթերցումն ինչ լոյս պիտի տայ ոչ միայն վերին Ասիոյ պատմութեան, այլ և Եզիփատոսի, Հրէաստանի, Ելլագայի և Փոքր Ասիոյ։

## Գ

Պ. Մշնանի միւս հրատարակածը, Բարեկոն և Քաղղէաստան, առջինին պէս տախտակներով և յատակագիծներով ճոյսացած է, մասնաւորապէս Բաբելոնի և Պորսիպապայի, ուր գեռ կանգուն են մեծ չնիքի մը աւերակներ, զոր Արաբացիք Բաբելոնի աշտարակը կը համարին. նաև Բաբելոնստանի ուրիշ քաղաքաց, որոնք ըստ ժամանակագրաց այլ և այլ պզտիկ տէրութեանց մայրաքաղաք եղան։

Քաղղէաստանի սկիզբները կը գտնայ Պ. Մշնան, այն նախնական պատմութիւնքը՝ որոնք կը գտնուէին մերձակայ աղգաց մէջ։ Ա. Գրոց Ջե՞նեղեղին կը մօտենայց քաղղէացի այն հետաքրքրական պատմութեանց մայրաքաղաք եղան։

թիւնը, որուն համառօտութիւնը տուած էր արդէն թերոսոս, և որուն ամբողջ սկզբնագիրն աղիւներու վրայ պահուած էր, որոնցմով Ասուրպանիբալի պալատան գրատունը կը կազմուէր:

Հն նաւեր կը գտնուին աստուածներուն տուած ձեռվը, մարդկանց և կենդանեաց ընտրութիւն որոնք հոն պիտի մտնան, ազանցն առաքուն ողողման կետը իմանալու համար, տապանին մեր ծայրը դադարիլը, նաւէն ելլալու տատնի դուշը, երկնից և մարդոյ մէջ նոր գաչինքը: Այս պատմութիւնն քաղցէացի ընդարձակ գիւցափներգութեան մը հաստուածն է, որուն դիւցազունքն են Քախութիրոս (Նոյ) և Խառուպար՝ բարելացի. Հերակլէսն:

Ցաւալի է որ գեռ բան մը չգտնուեցաւ Բարելնի աշտարակին, լեզուաց խառնակութեան և ուրիշ պատմութեանց վրայ:

Համբրամն ալ քաղցէացի նախնական դիւցազներգութեանց կը վերաբերի: Իր պատմութեան ասոսապիշաբանութիւնն ոչ միայն իրեն ընծայեալ չափէ զուրս քաջութիւններէն կ'իմացու, այլ և իր ծննդեան և մահուան հանգստմաններէն: Ծնաւ ՚ի սիրց Դերգեցոյ աստուածուհուոյն: Մայրն ըրած յանցանաց վրայ ամբշնալով, զտղան անապատ կը ձգէ ուր աղաւնիք կը սնուցաննեն զՆամիրամ: Իր մօրը պատճառաւ է, կ'ըսէ Դիմոդոր, որ Ասորեստանեայք կը յարգեն զգուկը, և աղջկանը պատճառաւ ալ աղաւնաց պատոն կ'ընճայն: Խսկ գալով Համբրամյա արշաւանքներուն՝ պարզ ստեղծաբանութիւնը են: Բնաւ ասորեստանցի աշխարհակալ մը այնչափ հեռու չընաց: Պ. Ֆ. Լընորման կը բացատրէ ինչպէս այս վիպաց սկիզբը Պարմից Թագաւորաց ժամանակը եղաւ, և թէ ինչ օգուտու կը տեսնային զաննիք տարածելով:

Ստորին Եփրատ հայրէնիք է դից և երկիր բուռն երևակայութեան: ուր աստուածոց սկիզբն կը կարծուի և նախասահմանեալ ծնունդն թագաւորաց զարմանք չէ որ վաւերական գրութեան մը մէջ, աղիւսի վրայ, Համբրամյա պատմութեան պէս զարմանալիք գտնուին:

Սարկոն թագաւորը (որո պէտք չէ շփոթել Ասորեստանի Ասրկոնին հետոր տիրեց կիարոսի՛ Քրիստոսէ ութը դար առաջ): այսպէս կը պատմէ իր ծնունդը:

» Ասրկոն արքաց հզօր, արքայ Անկասիրայ, « Ե՞ս — Անհայր յղացաւ զիս մայրէ իմ... և Յդացաւ զիս ՚ի բաղաբէ Ասորիիմահի, առ և ափամըրք Եփրատայ: Երիկնեաց զիս մայրէ և իմ և մնաւ յառանձին որդիք, եղ զիս ՚ի և տապանակ տայու և ծնիփեաց զիս կորաձիւ... և րավ և եղ զայն ՚ի վերայ զետոյ՝ որ տանալ տաւ և րաս ՚ի րաց, Ծփեալ տարուրերէի ՚ի վերայ և զետոյն որ կացոյց զիս մինեւ ցԱրքի իշխեն և ցողն չորց. Աս զիս և սենոյց, և Խսար յաջու և զեսաց ինձ ՚ի Տշակուրին... : »

Արդ Սարկոն և իր որդին Նարամ Սին, Հոչակուած են Նաբոնիտ թագաւորին մեծ գլանին վրայ (Ն. 555), իրեւ Նախորդք այս էինանիս: Իրենց պատմական գյուղինը սարակոյս չիվելցներ. և սակայն Սարկոնի ընծայեալ դիւցական արկածներն ամենուն ալ չափազանց կ'երեւան: որով կը մօտենայ այն քանին մը առասպելեալ դիւցազանց որոնք սեմական կամ արիական ցեղին բազմաթիւ աւանդութեան մէջ կը գտնուին: Զուրը ձգուեր է՝ ինչպէս Հռոմուլոս և Հռեմոս հռովմէական վիստաց մէջ. ինչպէս Վերսէսու և իր Դանաէ մայրն Ալլապայի և վիորք Ասիոյ աւանդութեանց մէջ,

Կը գտնանք դարձեալ Համբրամ՝ ՚ի Քաղցէաստան, Կիւրոս ՚ի Պարսկիս, Եղիպս ՚ի Յունաստան, իրենց ծննդեան ժամանակ կը օտար տեղեր ձգուեր Արամադդ Կրետէի մէջ գաղտուկ մնաւ: Ամամեայ այծէն և Խանա Երան մեղուներէն: Սարկոն իր կենաց պատճառ իր հայրը չիւամարիր, այլ աստուած մը: Այս իրենց զիրենն ասսուտածոց ծնունդ կարծելն այնչափ սովորական է Ասիոյ և Յունաստանի վիստաց մէջ, որ Մ'են Ալեքսանդր անգամ իր ՈՂիմափա մօրք վկայութեանի այսպիսի ծնունդ մը իրեն սկսաւ ընծայել, և ուրանալով Փիլիպոսի հայրութիւնը, Արամազդայ որդի սկսաւ կուել ինքիզիթը: Այս պարագայիս մէջ ՈՂիմափութագաւորն, օձ փոխուեր է, ինչպէս ուրիշ անգամ կարապ, ցուլ, ամգ, ուղեայ անձրեւ:

Ոտուաց հին երգերուն մէջ Վոլկա զիւցազնը, Ալլաւաց Պրոտեստ, նոյնպէս օձի մը զաւակ է: Այսպէս քանին մը դիւցական վեպք հաւասարապէս բոլոր ճերմակ ցեղի ազգերն ունին:

Սարկոնի ըսածն այնքան չափազանց չե-

րեար մեղի. երբ տեսնանք որ Նաբուգո-  
զոնուոր մը, Բաբելոնի ամենէն ծանօթ  
թագաւորն, ինքզինը նոյնակէ կը հրատա-  
րակէ և Աստուածն թէլ ստեղծ դիս և Աս-  
տուածն Մարտուք ծնաւ դիս ։ Այսու ա-  
մենային իր արձանագրութեանց շարու-  
նակութեան մէջ, ինքզինքը պարզ մաշկա-  
նացուի մը՝ Նաբուպատշարի որդիկ' անուա-  
նէ և ճշմորիտ հիմնադիր « Քաղդէացւոց  
մեծ իշխանութեան » :

Բաբելոն (անմական բառերէ բար, գուռն,  
և կոր կամ ալյան, աստուած) Նմուտէէկ ա-  
ւելի փոփոխութիւն կրեց : Եվրատայ թա-  
դուհին իր Տիգրիսի ափայենին հետ գարա-  
կան մարտից մէջ շատ կրեց . երկու անգամ  
Թագղաթիազասարի և Ասրկոնի ժամանակ  
Քաղդէաստան աւերեցաւ, և մեծամեծ  
գաղութներով ամոյացաւ : Վերջապէս իր  
յետին մեծութիւնը հաստատեց երկրորդ  
Նինուէի աւերակաց վրայ :

Քաղդէական արձանագրութեանց մէջ Պ.  
Աշխան նշանաւոր կէտեր գատ, որոնք կը  
հաւաստեն Ս. Գրոց Կ յոյն պատմագրաց՝  
Բաբելացւոց կենաց վրայ լսածները :

Զօր օրինակ Հերոդոտոս կը պատմէ, որ  
տարւոյն սահմանեալ ժամանակի մը ծա-  
խու կամ անուրդի կը հանէին Բաբելոնի  
աղջկունքը : Գեղեցիկները շատ ստակ ըն-  
ծայովին կը տրուէին, իսկ տգեղներն առ-  
նողները ստակ կ'ընդունէին (Ա. 196): Արդ,  
պղտի լիշտատակարանք և միթապտղոյ ձևով  
փորիկ քարերը, որոնք Քաղդէացւոց Մե-  
րովդաբ-Բալատան թագաւորին ժամանա-  
կէն են, հետագայ տեղեկութիւնները կու  
տան իր կանանցոյն համար զնած կանանց  
վրայ, տարւոյն այն ամսոյն որ միշտ նոյն է  
(որ է սկզբար) :

Մաննադդամագ, գնեալ յամսեանն Սէ-  
պար յիշներորդ ամի իշխանութեան Մե-  
րովդաբ-Բալատանի, արքային Բաբելոնի :  
Ազդիկն էքինու, գնեալ յամսեանն սկզբար,  
՚ի տասններորդ ամի : Կինն Հալալագ, յամ-  
սեանն սկզբար ՚ի մետասաներորդում ամի :

Օսմաննեան արքունեաց Գատր կիհակի կո-  
չուած օրուան արքարողութիւնն անշուշտ  
Բաբելոնի արքունեաց մէջ կար . որովհե-  
տեւ զայդ ակնարկել կու տան արձանա-  
գրութեանց այլ և այլ խօսքերն :

Բարուք մարգարէն Քաղդէացւոց կռոց  
զէմ ըրած անիծիցը մէջ կ'ըսէ . « Զօրէն

զարդասէր աղջկանց լկտեաց չքթելոց՝ ա-  
ռեալ զոսկին կոչկոճեալ, զգլուխ գիցն  
իրեանց պասկօք զարդարեն . և իցին ժա-  
մանակք, զի բուրմէն նոցա առեալ զոսկին  
և զարդասէն՝ յիրեանց պէտս մաշեն » :  
Սայդ է որ ՚ի Բաբելոն աստուածոց և աս-  
տուածուէսեաց արձաններուն ոսկիէ զար-  
դարանքներ կը հազուեցընէին, հարուստ  
կերպասներ և զլուխնին ալ պսակ կը դը-  
նէին : Ասուրապանիրակի արձանագրութիւն  
մը մեզի կ'իմացնէ որ տուեր է .

« Տաղանդը չորք վան պահանձանաց Մար-  
տուք աստուածոյն և Զարրանիդ յիշուանյն :  
« Շրի և ոսկեայ հանդիքներ պանեցի զիսն  
և Մարտուք և Զարրանիդ : Ի յինորին ան-  
դրիաց Մարտուքայ և Զարրանիդի եռու  
և հանոյս արևելեայ՝ ՚ի քա վիմեկ, յականց  
և վիմին ծագու, ՚ի քարանց ծէդրու սու-  
ս գու... ՚ի սպիտակ կաէից և յականց պա-  
ստուկանց որոց հուզակ ծանեօւ և ամենե-  
« ցուն, կերպասնիք շընդ զարդարիցի զմեն-  
և ծագան աստուածութիւնն եոցա, զիոյրս  
և եղիշեարարան, զպակս զօրուրեան եոցա,  
և զնանական յիշական զի ՚ի կատոր հասցէ  
« զարդ եոցա և յօրինուած : »

Սակայն այնպէս կ'երեւայ որ այս սրբա-  
զան պանուճապատամքերը հագուեցընելը  
կամ հանուեցընելը՝ խորհրդաւոր իմաստ  
մը ունէր, ինչպէս Պ. Աշխանի իսդար զի-  
ցուէւոյն զանազան զարդոց արձանագրու-  
թեանց մէջ կ'երեւայ :

Վերջապէս Բարուք կ'ամբաստանէ գքուր-  
մերը որ իրենց կ'առնուին աստուածոց ըն-  
ծայեալ ոսկին և արծաթը : Ի հաստատա-  
թիւն ասոր կրնայինք մէջ բերել Ասուր-  
պանիրավի արձանագրութիւն մը որ քըր-  
մապէտի մը անհաւատարման թիւնը կը ցու-  
ցնէ : Ասիկայ զողցեր էր տասը տաղանդ  
ոսկի որ իրեն բարեպաշտ գործոյ մը հա-  
մար տրուած էր, կանգնելու աստուածոյ  
մը արձանը :

Ս. Գրոց յիշած Նաբուպագունսուրի չա-  
փազանց գոտուութիւնը, երբ օր մը ՚ի քա-  
փառաւոր Բաբելոնը կը դիմէր, յայտնի կը  
տեսնուի իր շինուածոց վրայ գրած բառե-  
րուն մէջ :

« Կանցնեցի զջանար Արեւ, զջունն Յա-  
« յիտենական, զբնակուրին Ցետոն իմոյ Աս-

« մաս անտուածոյն. 'ի վեաս Ցեասի իմոյ  
« խմանակարի:

« Սամաս մեծ Աստուած, օրինեա՞ի խու-  
« ս եարհեղ զրովանդակ խակ մասունք Մշնենիս  
« Ալդական զարմանասրան ձեռակերպիս :  
« Ուսամբը այսորի և բարտորք, զայիք և  
« սինք հրաշակերտք անմահացուցին զանոն  
« իմ » :

Ա. Գրոց Նաբուգոդոնոսորի փոփոխու-  
թեան վրայ պատմածը, նշանակուած է բա-  
րելական այս վիպաց մէջ զորս կ'աւանդեն  
մեզ Արիւգենոս և Բներոսսու : Կ'ըսեն որ Նա-  
բուգոդոնոսոր իր պալատան պատշգամիի  
մը վրայ ելլալով իմացուց իր ժողովրդեան  
որ Արեւելքն պարսիկ ջրի (Կիւրսու) մը  
պիտի գար և պիտի կործանէր բարելոնի  
ինքնակալութիւնը, Այս ձախորդ գուշակու-  
թենէն վերջը մարդկանց աչքէն աներեւոյթ  
եղաւ :

Բաղդասարի ժամանակ եղած Քաղզէա-  
ստանի աղետալի վախճանին վրայ, Բա-  
րելոնի արձանագիրը բան չեն ըսեր, ինչ-  
պէս նաև Ասորեստանի արձանագրութիւնը  
նինուէի կրկին կործանման վրայ :

Բազգասարէն ետքը Տիգրիսի ու Եփրա-  
դայ գաշտերն անցան արիական ցեղերու,  
Պարսից, Յունաց, Աբելակիացւոց, Հռովե-  
մայեցւոց, Պարթևաց և Սասանեանց : Եւ  
սեմական ցեղին չդարձաւ մինչեւ Արարա-  
ցւոց գայուսատը: Բայց դարձեալ արիական  
ցեղերն են Գաղղիացիք և Անդղիացիք, որ  
պայծառացուցին Սենեքերիմի և Նարուզո-  
դոնոսորի տաճարները և Ասուր-Նասիր-  
Հարալից ու Սարկոններուն յաղթական  
արձանագրութիւնները :

Պ. Մէնանի պիտի օգնեն այս բաները  
աւելի ծանօթ ընելու: Յուսանք որ Թագ-  
զագբաղասարի և իրեն նմանեաց արձա-  
նագրութեանց վերջը դրուած օրնութիւն-  
քը աղէկ արդիւնք պիտի ունենան .

« Այս որ պարագայց ամօք զինի իմ և-  
« կնոցէ, ասացի զայս: Ոյ սրբէ զոսիստակն  
« իմ, և յարդարէ և զին ի տեղիս իշրեանց,  
« և զանոն իշր առ խմով դիցէ:

« Անո և աստուածքն մնեամեթք, տացեն  
« և նմա զորայստրին սրտի և յաջուցեն նմա  
« ի գործս » :

## Հ Ա Ր Ա Մ Է Ա Կ Ա Ն Հ Ի Ն Օ Ր Ա Գ Ի Ր Ք

Վիկտոր-Քլէրը 1838 թուականին  
Բարիզու մէջ մէկ յօդուած մը հրատա-  
րակեց Հառնեական Օրագիրք մակա-  
նուամբ և վայելու ու խորին քննու-  
թեամբ կը խօսի ոչ միայն Հռովմայի ա-  
մէն տեսակ քաղաքական խնդրոց վրայ,  
այլ նաև Օրագրաց ձեմին, նիւթին,  
պարագայից և կարեւորութեան վրայ: Օրագրաց սկիզբը ինքը հաւանական  
կը համարի որ նուաննուից ինալիքն ե-  
թեք տարի վերջը սկսած ըլլայ, երբոր  
քրմապետաց տարեգրութիւնը դազրե-  
ցաւ: Կարծիք մը՝ որուն կ'ընդդիմա-  
նան շատերը, յեցեալ Սուետոնիոսի  
մէկ վկայութեանը վրայ, որ ուրիշ  
կերպ հասկըսուած է. և կը գնեն կե-  
սարու առաջին հիւպատոսութեան ժա-

մանակ, Օրագրաց առաջին հրատա-  
րակումը :

Առաջ երթարով գեռ աւելի նոր ա-  
տեններս այս խնդրոյս վրայ գրողներ  
եղան ի գերմանիա, և բաց յայլոց յօ-  
դուած մ'ելաւ Ռէնսէնի անուամբ, յո-  
րում կը հրատարակուին ժողովրդեան  
օրական գործերը, ծերակուածի վճիռ-  
ները, զինուորական և քաղաքական  
գէպքերը. և կը հետազոտէ անոնց ձեզ,  
նիւթը և արժէքը, երբեմն աղէկ քննա-  
դատութեամբ, և երբեմն ալ անհիմն  
կարծիքներով հնոց կարծեաց դէմհա-  
կառակելով:

Քլէրը համարեցաւ, և շատերն ալ ի-  
րեն հետեւեցան այս կարծեացու, թէ  
կեսար հրատարակած ըլլայ ծերակու-